



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

0010, ՀՀ, ք.Երևան, Զաքյան 7-2

info@advocates.am

17.02.2020թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

2018թ. հունվարի 1-ից առ 2020թ. փետրվարի 10-ն ընկած ժամանակահատվածում փաստաբանների իրավունքների պաշտպանության հետ կապված ՀՀ փաստաբանների պալատի կողմից կատարված գործողությունների մասին

1. **16.01.2018թ.** Փաստաբանների պալատը կազմակերպել է քննարկում՝ փաստաբանի նկատմամբ դատարանի կողմից որպես դատական սանկցիա տուգանքի կիրառման օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ, դրանք համարելով անթույլատրելի: Փաստաբանների պալատը նույն օրը դիմել է ՀՀ Ազգային ժողովի նախագահին և ՀՀ արդարադատության նախարարին առաջարկելով՝ ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի նախագծից փաստաբանների և դատախազների նկատմամբ տուգանք կիրառելու մասին կանոնը հանել:

2. **16.01.2018թ.** փաստաբանները հայտարարություն են տարածել դատական տուգանքի վերաբերյալ, որին 19.01.2018թ. դրությամբ միացել են 1110 փաստաբան, այնուհետև այդ թիվն աճել է:

3. **19.01.2018թ.** Լոռու մարզի փաստաբանները մեկ օրյա նախագգուշական բողոքի ակցիա են կազմակերպել բոլորտելով դատական նիստերը և նախաքննության մասնակցությունը:

4. **22.01.2018թ.** Շիրակի մարզի փաստաբանները մեկ օրյա նախագգուշական բողոքի ակցիա են կազմակերպել:

5. **24.01.2018թ.** Տավուշի և Արարատի մարզերի փաստաբանները մեկ օրյա նախագգուշական բողոքի ակցիա են կազմակերպել:

6. **25.01.2018թ.** Փաստաբանների պալատի խորհրդի անդամներ Արա Զոհրաբյանը, Կարեն Մեժլումյանը, Սեդրակ Ասատրյանը, Կարեն Սարգսյանը և

Տիգրան Խուրշուդյանը հանդիպել են ՀՀ Ազգային ժողովի Պետական-իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հրայր Թովմասյանին և քննարկել են նախագծով սահմանված՝ դատարանի կողմից փաստաբանի նկատմամբ տուգանքի կիրառում նախատեսող իրավակարգավորման հետ կապված հարցերը:

7. **29.01.2018թ.** Սյունիքի մարզի փաստաբանները մեկ օրյա նախագգուշական բողոքի ակցիա են կազմակերպել:

8. **31.01.2018թ.** Փաստաբանների պալատում ամփոփիչ քննարկում է անցկացվել դատական տուգանքի հետ կապված հարցով:

9. **07.02.2018թ.** տեղի է ունեցել մեկ օրյա բողոքի ակցիա Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

10. **12.02.2018թ.** փաստաբան Սամվել Զաղինյանը ահազանգ է ներկայացրել ՀՀ փաստաբանների պալատ և տեղեկացրել, որ իրեն չեն թողնում ներս մտնել ԱԱԾ և իրականացնել իր պաշտպանյալի իրավունքների պաշտպանությունը: Ահազանգի հիման վրա Պալատի փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի անդամը ներկայացել է համապատասխան վայր, արձանագրել իրավիճակը:

11. **17.03.2018թ.** փաստաբան Վրեժ Խաչիկյանը հեռախոսազանգով տեղեկացրել է, որ իրեն չեն թողնում մուտք գործել ոստիկանության էրեբունու բաժին՝ բերման ենթարկված իր վստահորդին իրավական օգնություն ցույց տալու համար: Ահազանգի հիման վրա կապ է հաստատվել ոստիկանության հետ հուշագրի շրջանակում ոստիկանության ներկայացուցչի հետ և ձեռնարկված միջոցառումների արդյունքում փաստաբանին թույլատրել են այցելել բերման ենթարկված անձին:

12. **11.04.2018թ.** Փաստաբանների պալատում տեղի է ունեցել աշխատանքային խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվել են փաստաբաններ Ալեքսանդր Սիրունյանի, Կարեն Կիրակոսյանի և Մհեր Բադալյանի նկատմամբ սկսված քրեական հետապնդումներ իրականացնելու վերաբերյալ հարցերը: Խորհրդակցության մասնակիցները կիսել են այն մտահոգությունը, որ փաստաբանների քաղաքացիաիրավական բնույթ ունեցող գործողությունները քրեաիրավական դաշտ տեղափոխելը փաստաբանների անկախության համար ռեալ վտանգ է ներկայացնում:

13. **17.04.2018թ.** փաստաբան Էդգար Հակոբյանը հեռախոսազանգով տեղեկացրել է, որ իրեն չեն թողնում մուտք գործել ոստիկանության Մասիվի բաժին՝ բերման ենթարկված իր վստահորդին իրավական օգնություն ցույց տալու համար: Ահազանգի հիման վրա կապ է հաստատվել ոստիկանության հետ հուշագրի շրջանակում ոստիկանության ներկայացուցչի հետ:

14. **17.04.2018թ.** Փաստաբանների պալատը ձևավորել է բերման ենթարկված քաղաքացիներին անվճար առաջին իրավաբանական օգնություն տրամադրելու պատրաստակամություն հայտնած փաստաբանների խումբ՝ կապված ապրիլյան հայտնի իրադարձության հետ: Խմբում ընդգրկված փաստաբաններն անվճար

իրավաբանական օգնություն են ցույց տվել քաղաքացիներին և բախվել են ոստկանության կողմից բերման ենթարկված անձանց մոտ մուտք գործելու խոչընդոտների, որոնց մի մասը լուծվել է հուշագրի շրջանակներում կատարված միջամտությունների շնորհիվ:

15. **23.04.2018թ.** փաստաբանների պալատի խորհուրդը՝ քննարկելով բերման ենթարկված խաղաղ հավաքի մասնակիցներին իրավական օգնություն ցույց տվող փաստաբանների հայտարարությունը՝ իրավախախտման դեպքերը դատապարտող որոշում է կայացրել, այն է՝ խստորեն դատապարտել նման իրավախախտման դեպքերը և կոչ անել իրավասու մարմիններին՝

1) ապահովել բերման ենթարկված հավաքի մասնակիցների՝ փաստաբանների միջոցով իրավաբանական օգնություն ստանալու անօտարելի իրավունքի պատշաճ իրացումը.

2) ազատությունից զրկված անձանց, այդ թվում՝ ԱԺ պատգամավոր Նիկոլ Փաշինյանին ապահովել՝ այդ մասին անհապաղ իր ընտրած անձին տեղեկացնելու և իրավաբանական օգնություն ստանալու անօտարելի իրավունքների իրացումը:

16. **23.05.2018թ.** ՀՀ փաստաբանների պալատը դիմել է ՀՀ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանին, Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ՝ պարոն Վլադիմիր Վարդանյանին, պատգամավորներ Հերիքնազ Տիգրանյանին, Էդմոն Մարությանին, Տարոն Սիմոնյանին, Սուրեն Գրիգորյանին և Աննա Կարապետյանին՝ խնդրելով օժանդակել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում՝ փաստաբանների նկատմամբ դատական տուգանք կիրառելու հնարավորություն նախատեսող նորմերը փոփոխելու հարցում: Նշված գրությանը կցված են եղել համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախագծերը:

17. **23.05.2018թ.** ՀՀ փաստաբանների պալատը դիմել է ՀՀ արդարադատության նախարարությանը՝ խնդրելով օժանդակություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում՝ փաստաբանների նկատմամբ դատական տուգանք կիրառելու հնարավորություն նախատեսող նորմերը փոփոխելու հարցում: Նշված գրությանը կցված է եղել նախագծերի փաթեթը:

18. **15.08.2018թ.** ՀՀ փաստաբանների պալատը գրությամբ դիմել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ առաջարկելով քննարկել՝

Ա. «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, հիմնավորումները և տեղեկանքները.

Այս նախագծով առաջարկվել է ավելացված արժեքի հարկի չեղարկել փաստաբանների կողմից ֆիզիկական անձանց մատուցվող ծառայությունների մասով:

Բ. «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, հիմնավորումները և տեղեկանքները.

Այս նախագծով առաջարկվել է վերացնել շահաբաժինների հարկման կառուցակարգը և վերադառնալ նախքան 04.10.2016 թվականի ՀՀ հարկային օրենսգրքի ընդունումն առկա կարգավորումներին, երբ իրավաբանական անձի գործունեության արդյունքում ձևավորված շահույթից մասնակիցների (բաժնետերերի, փայատերերի) ստացած շահաբաժինները չէին հարկվում

Գ. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, հիմնավորումները և տեղեկանքները.

Այս նախագծով առաջարկվել է սահմանել նոր հանցակազմ հետևյալ բովանդակությամբ՝ Հայիոյանքը՝ խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ եղանակով հանրորեն հայտնի անպարկեշտ բառերի և հասկացությունների հրապարակային արտահայտումն է համացանցում կամ զանգվածային լրատվության միջոցներով՝ ուրիշի պատիվն ու արժանապատվությունն արատավորելու նպատակով...

Դ. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, հիմնավորումները և տեղեկանքները.

Այս նախագծով առաջարկվել է սահմանել նոր հանցակազմ հետևյալ բովանդակությամբ՝ Փաստաբանին՝ իր մասնագիտական գործունեությունն իրականացնելու առնչությամբ վիրավորելու...

Ե. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, հիմնավորումները և տեղեկանքները.

Այս նախագծով առաջարկվել է սահմանել Զրպարտության և (կամ) վիրավորանքի գործերի քննության առանձնահատկությունները:

19. **18.07.2018թ.** Փաստաբանների պալատը դիմել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ բարձրաձայնելով ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից փաստաբանների կողմից ստորագրված դիմումները, միջնորդությունները և այլ փաստաթղթերը փաստաբանական գրասենյակի տեխնիկական աշխատակիցների կամ այլ անձանց միջոցով ներկայացվելու դեպքում մուտքագրելուց հրաժարվելու վերաբերյալ:

20. **14.09.2018թ.** ՀՀ փաստաբանների պալատը հայտարարություն է տարածել ՀՀ ԱԱԾ տնօրենի և ՀՀ ՀՔԾ պետի գաղտնալսման վերաբերյալ, որով հայտնել է իր մտահոգությունը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենի և Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության պետի՝ զանգվածային լրատվության միջոցներով լայն տարածում ստացած հեռախոսային խոսակցության, ինչպե՛ս (1) գաղտնալսման և հրապարակման փաստի, այնպես էլ՝ (2) դրա բովանդակության վերաբերյալ:

21. **12.12.2018թ.** ՀՀ փաստաբանների պալատը կոչ է արել դատավորներին ցուցաբերել մասնագիտական համերաշխություն և ձեռնպահ մնալ

փաստաբանների նկատմամբ դատական տուգանք կիրառելուց, մինչև նշված հարցով ՀՀ Ազգային ժողովի վերջնական դիրքորոշումն ստանալը:

22. **25.12.2018թ.** ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդն ընդունել է որոշում, որով որոշել է՝ 1. Խստորեն դատապարտել փաստաբանների և դատավորների նկատմամբ իրականացվող ճնշումները, անկախ դրանց դրսևորման ձևից և ժամանակից: 2. Զորակցություն հայտնել դատավորներին՝ հորդորելով չշեղվել իրենց սահմանադրական առաքելությունից: 3. Դիմել ՀՀ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանին՝ առաջարկելով հանդես գալ կոչով և օգտագործել իր հեղինակությունը հասարակության մոտ իրավագիտակցության բարձրացման գործուն քայլեր կենսագործելու ուղղությամբ:

23. **14.01.2019թ.** ՀՀ փաստաբանների պալատի նախագահը, խորհրդի անդամ Սիմոն Բաբայանը և մի խումբ փաստաբաններ, արձագանքելով Մանվել Գրիգորյանի պաշտպան Արսեն Մկրտչյանի ահազանգին ցուցարարների կողմից իր մասնագիտական պարտականությունների կատարման խոչընդոտներ ստեղծելու մասին, ներկայացել են ՀՀ վերաքննիչ քրեական դատարան և բանակցել ցուցարարների հետ, ովքեր հավաստիացրել են, որ փաստաբանի դեմ որևէ գործողություն չեն կատարի:

24. **14.01.2019թ.** Փաստաբանների պալատում տեղի է ունեցել փաստաբանների ակումբի նիստ, որտեղ քննարկվել են վերջին ժամանակահատվածում փաստաբանների նկատմամբ մի խումբ անձանց կողմից կատարված վիրավորական և անհանդուրժող արարքներից պաշտպանվելու հարցը: Փաստաբանների պալատն արձանագրել է, որ զգայուն քրեական գործերով մասնակցող փաստաբանների իրավունքները (արժանապատվությունը) պաշտպանված չեն: Քննարկման ժամանակ մասնավորապես որոշվել է՝

- Ընդլայնել փաստաբանների արագ արձագանքման խումբը՝ կամավորության սկզբունքով ներգրավելով նոր փաստաբանների:
- Կոչ ուղղել իրավապահ մարմիններին՝ փաստաբանների մասնագիտական գործունեության իրականացման խոչընդոտները վերացնելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու համար:
- Կոչ ուղղել ՀՀ վարչապետին, որպես գործադիր մարմնի ղեկավարի՝ ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի հարգվի, պաշտպանվի և խթանվի փաստաբանի մասնագիտական գործունեության ազատությունն առանց խտրականության և իշխանությունների կամ հասարակության որոշ անդամների կողմից ոչ իրավաչափ միջամտության, այդ թվում՝ նախաձեռնել մասնագիտական գործունեության առնչությամբ փաստաբանին վիրավորելու, նրա նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու և փաստաբանի

լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու արարքները քրեականացնելու գործընթաց:

- Սահմանել, որ խնդրի լուծմանն ուղղված գործադիր իշխանության կողմից համարժեք միջոցներ չձեռնարկելու պարագայում փաստաբանական համայնքը կնախաձեռնի համընդհանուր փաստաբանական բողոքի ակցիաներ:

(Արդարադատության նախարարը և վարչապետին արձագանքել են այս խնդրի կապակցությամբ և կարևորել փաստաբանի մասնակցության աշխատանքը)

25. **29.01.2019թ.** փաստաբանների պալատում տեղի է ունեցել փաստաբանների ակումբի նիստ, որտեղ փաստաբանները քննարկել են ՀՀ ֆինանսների նախարարության նախաձեռնությամբ շրջանառության մեջ դրված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ այսուհետ՝ Նախագիծ) հետ կապված հարցերը: Նախագծով փաստաբանների, խորհրդատուների և հաշվապահների համար շրջանառության հարկի համակարգում աշխատելու սահմանափակումներ են նախատեսվել:

26. **01.02.2019թ.** ՀՀ փաստաբանների պալատը դիմել է ՀՀ վարչապետին և բարձրաձայնել 23.01.2019թ. հրապարակված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծի վերաբերյալ մտահոգությունը, որի ընդունման դեպքում փաստաբանական ծառայություններ մատուցող անձինք այլևս չեն կարող համարվել շրջանառության հարկ վճարողներ և պետք է շրջանառության 5 տոկոս հարկի փոխարեն վճարեն 20 տոկոս ավելացված արժեքի հարկ և 18 տոկոս շահութահարկ:

27. **05.02.2019թ.** ՀՀ փաստաբանների պալատը գրություն է ուղղել Երևանի քաղաքապետին՝ խնդրելով հանձնարարել Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների նիստերին բացառել փաստաբանների մասնակցությունը խոչընդոտելու դեպքերը:

28. **04.04.2019թ.** ՀՀ փաստաբանների պալատը դիմել է բարձրագույն դատական խորհրդին բարձրաձայնելով փաստաբանական համայնքին հուզող մի շարք խնդիրներ, ինչպիսիք են մարզերում ոչ աշխատանքային օրերին հերթապահների և հետադարձ կապի միջոցների բացակայությունը, դատարանների աշխատակիցների հետ շփման հստակ մեխանիզմների բացակայությունը, ինչը տեխնիկական հարցեր պարզելը դարձնում է անհնար, դատարաններից ծանուցումները և որոշումները չափազանց ուշ ստացվելը և Datalex.am կայքում տեղեկությունները շատ ուշ լրացվելը, ձևական պահանջների չպահպանման պատճառաբությամբ հայցադիմումների վերադարձը (օրինակ՝ դատարանը վերադարձնում է հայցը, եթե հայցադիմումում գրվել է հասցե, այլ ոչ թե՛ հաշվառման հասցե) և այլն:

29. **22.04.2019թ.** տեղի է ունեցել Բարձրագույն դատական խորհրդի նիստը, որին մասնակցել է նաև ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը: ԲԴԽ նախագահը քննարկման է ներկայացրել Ա. Ջոհրաբյանի՝ Խորհրդին ուղղված գրությունը, որում ներառված էին փաստաբանների որոշ դիտարկումներն ու առաջարկությունները՝ արդարադատական գործընթացների արդյունավետ կազմակերպման առնչությամբ: Դատական դեպարտամենտի համապատասխան ստորաբաժանումներին տրվել են հանձնարարականներ՝ քննարկման ընթացքում ներկայացված մի շարք հարցերի ուղղությամբ կատարելու լրացուցիչ ուսումնասիրություններ ու վերլուծություններ և դրանք ներկայացնել Խորհրդին: Արձանագրվել է նման քննարկումների կազմակերպման կարևորությունը և պայմանավորվածություն ձեռք բերվել դրանք դարձնել պարբերական:

30. **03.05.2019թ.** ՀՀ փաստաբանների պալատը դիմել է ՀՀ արդարադատության նախարարությանը՝ առաջարկելով ՀՊԳ հաստիքները լրացնել առնվազն 5 հաստիքով և նախաձեռնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու օրինագծի մշակման գործընթաց, ինչով ժամանակավորապես կլուծվի ՀՊԳ գերծանրաբեռնվածության հարցը, ինչպես նաև գործերի չհիմնավորված աճը զսպող մեխանիզմ կներդրվի: Գրությանը կցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու օրինագծի նախագիծը:

31. **19.05.2019թ.** ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը հրատապ նիստ է անցկացրել և որոշել է կոչով դիմել Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանությանը՝ ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վտանգել դատական իշխանության անկախությունը կամ դիտարկվել որպես միջամտություն արդարադատության իրականացմանը: Այս որոշման առիթ է հանդիսացել վարչապետի 19.05.2019թ. ֆեյսբուքյան իր էջում արված կոչը՝ հասարակության անդամներին՝ հանրապետության բոլոր դատաբանների ելքերն ու մուտքերն արգելափակել:

32. **24.06.2019թ.** ՀՀ փաստաբանների պալատը տարածել է հայտարարություն այն մասին, որ Ազգային ժողովի «Իմ քայլը» խմբակցությունը ձախողեց կառավարության նախաձեռնությունը, որի արդյունքում ՀՀ Ազգային ժողովը, կողմ՝ 24, դեմ՝ 66, ձեռնպահ՝ 3 ձայներով, չընդունել «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Այս նախագծով առաջարկվում էր կարգավորել անվճար իրավաբանական օգնության հետ կապված որոշ խնդիրներ:

33. **02.07.2019թ.** ՀՀ փաստաբանների պալատը ևս մեկ անգամ դիմել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ բարձրաձայնելով ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից փաստաբանների կողմից ստորագրված դիմումները, միջնորդությունները և այլ փաստաթղթերը

փաստաբանական գրասենյակի տեխնիկական աշխատակիցների կամ այլ անձանց միջոցով ներկայացվելու դեպքում մուտքագրելուց հրաժարվելու վերաբերյալ:

34. **10.10.2019թ.** ՀՀ փաստաբանների պալատը դիմել է ՀՀ արդարադատության նախարարություն և ներկայացրել ՀՀ փաստաբանների պալատի կողմից մշակված ««Փաստաբանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը: Նշված օրենքների նախագծերով առաջարկվել է ներդնել Փաստաբանների պալատի դեպոզիտի ինստիտուտը:

35. **10.10.2019թ.** ՀՀ փաստաբանների պալատը ներկայացրել է ՀՀ արդարադատության նախարարությանը «Քաղաքացիական կացության ակտերի մասին» օրենքում, «Ազգային անվտանգության մարմինների» մասին օրենքում, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի հաշվառման մասին» օրենքում և համապատասխանաբար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացում կատարելու վերաբերյալ առաջարկություն, որը վերաբերել է համապատասխան մարմինների կողմից փաստաբանական հարցումներին պատասխանելու պարտականությանը:

36. **10.10.2019թ.** ՀՀ փաստաբանների պալատը ՀՀ արդարադատության նախարարություն է ներկայացրել իր կողմից մշակված «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագիծը, որով առաջարկվել է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» 2002 թվականի փետրվարի 6-ի ՀՕ-305 օրենքի 15-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ տասնհինգերորդ պարբերությունով. «Ձերբակալված կամ կալանավորված փաստաբանն ունի իրեն տեսակցության եկած՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի հետ առանձին, անարգել տեսակցելու իրավունք՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման, անկախ աշխատանքային օրերից կամ ժամերից: Ձերբակալված կամ կալանավորված փաստաբանի տեսակցությունը փաստաբանների պալատի նախագահի հետ տրամադրվում է այնպիսի պայմաններում, որոնցում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի ծառայողները նրանց կարողանան տեսնել, բայց չկարողանան լսել:»:

37. **15.10.2019թ.** ՀՀ փաստաբանների պալատը դիմել է ՀՀ արդարադատության նախարարությանը՝ խնդրելով նախարարի հանձնարարականը իրավասու պաշտոնատար անձանց՝ համապատասխան միջոցներ ձեռնարկել քրեակատարողական հիմնարկներում՝ մաքրության, տեսակցության սենյակներում անհրաժեշտ գույքի և մյուս պայմանների, ինչպես նաև տեսակցության կազմակերպման պայմանների բարելավման ուղղությամբ, ինչպես նաև Պալատը խնդրել է նախաձեռնել համապատասխան իրավական ակտի փոփոխության գործընթաց՝ փաստաբանական գործունեության համար

անհրաժեշտ համակարգիչների՝ արգելված իրերի և առարկաների ցանկից հանելու կապակցությամբ:

38. **30.10.2019թ.** Փաստաբանների պալատը դիմել է վարչապետին խնդրելով հանձնարել իրավասու մարմիններին՝ գործուն միջոցներ ձեռնարկել քաղաքացիների կողմից փաստաբաններին՝ իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելու առնչությամբ վիրավորելու և գրպարտելու վարքագիծը կանխելու կապակցությամբ: Նույն օրը փաստաբանների պալատը դիմել է արդարադատության նախարարին, խնդրելով փաստաբաններին իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելու առնչությամբ վիրավորելու հետ կապված Պալատի ներկայացրած նախաձեռնությանն ընթացք տալ: Այս գրությունների համար առիթ է հանդիսացել փաստաբաններ Հայկ Ալումյանի, Ռուբեն Սահակյանի, Արամ Վարդևանյանի, Հովհաննես Խուրդյանի և Արամ Օրբեյանի 25.10.2019թ. դիմումը:

39. **13.11.2019թ.** ՀՀ փաստաբանների պալատը տարածել է հայտարարություն ձերբակալված փաստաբանների վերաբերյալ, որով կոչ է արել փաստաբաններին չներգրավվել կոռուպցիոն հարաբերություններում և հավատարիմ մնալ փաստաբանի մասնագիտական կոչմանը:

40. **26.11.2019թ.** Փաստաբանների պալատի փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը հայտարարություն է տարածել Հովհաննես Չամսարյանի փաստաբանական գրասենյակում խուզարկություն կատարելու վերաբերյալ, որով դատապարտել է ՀՀ Ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի ավագ քննիչ Օ.Առաքելյանի՝ փաստաբանական գործունեությանը միջամտող, այդ թվում՝ փաստաբանական գաղտնիքը խախտող գործողությունները և հորդորել ՀՀ պետական մարմիններին ու պաշտոնատար անձանց զերծ մնալ փաստաբանական գործունեությանը որևէ կերպ ապօրինի միջամտելուց:

41. **20.01.2020թ.** Փաստաբանների պալատի փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը փաստաբան Էդգար Թումասյանի կողմից ներկայացված դիմումի քննարկման արդյունքում հայտարարություն է տարածել, որով դատապարտել է ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Արմեն Գյոզալյանի կողմից փաստաբանական գաղտնիքը խախտող գործողությունները և *հորդորել* իրավասու ՀՀ պետական մարմիններին ու պաշտոնատար անձանց՝ փաստաբանի և, վերջինիս վստահորդի միջև հեռախոսային կամ կապի այլ միջոցներով տարվող խոսակցությունների լսման և ձայնագրառման նյութերն անհապաղ ոչնչացնել:

42. **29.01.2020թ.** Փաստաբանների պալատի խորհուրդը որոշում է ընդունել, որով դատապարտել է փաստաբանների էլեկտրոնային փոստի հասանելիության և գաղտնիության խախտման, ինչպես նաև քննչական

մարմինների կողմից փաստաբանների և վստահորդների միջև հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման գործողությունները:

43. **23.01.2020** թվականին ստեղծվել է փաստաբանների իրավունքների խախտումներն արձանագրող աշխատանքային խումբ հաշվի առնելով փաստաբանների մասնագիտական գործունեությունը խոչընդոտող, ինչպես նաև փաստաբաններին սպառնալու և վիրավորելու դեպքերն արձանագրելու և Պալատի խորհրդին ներկայացնելու անհրաժեշտությունը:

44. **14.02.2020թ.** ՀՀ փաստաբանների պալատի կողմից ձևավորված փորձագիտական խումբ ներկայացրել է դիրքորոշումը ՀՀ վարչապետին և ՀՀ արդարադատության նախարարին՝ ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի՝ փաստաբանությանն առնչվող մի շարք հոդվածների վերաբերյալ:

ՀՀ փաստաբանների պալատի
աշխատակազմի ղեկավար՝ Մանե Կարապետյան